Ավտովթարների գրանցման կարգր ԱՊՊԱ համակարգում

ԱՊՊԱ ոլորտում գործում է ավտովթարների գրանցման հետևյալ համակարգը.

Ավտովթարների պարզ գրանցում համաձայնեցված հայտարարագրի միջոցով

Համաձայնեցված հայտարարագրի միջոցով կարելի է գրանցել ավտովթարը, եթե՝

- վթարին մասնակից են միայն երկու ավտոմեքենաներ, և վնաս է պատճառվել միայն այդ ավտոմեքենաներին կամ դրանցից մեկին,
- > վթարում ներգրավված երկու ավտոմեքենաներից առնվազն մեկի համար առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր,
- վարորդներից մեկն ընդունել է իր ամբողջական մեղավորությունը,
- տուժող վարորդի պահանջը մեղավոր վարորդի նկատմամբ չի գերազանցում 100.000 դրամը։

Ավտովթարների պարզ գրանցման դեպքում անհրաժեշտ է, որպեսզի վարորդները ձեռնարկեն հետևյալ հաջորդական գործողությունները՝

- > առնվազն երեք անգամ լուսանկարեն բախված ավտոմեքենաների փոխադարձ դիրքերն ու վնասվածքները,
- 🗲 լրացնեն և ստորագրեն համաձայնեցված հայտարարագիրը,
- **>** ազատեն ճանապարհի երթևեկելի մասը,
- տեղի ունեցած ավտովթարի մասին հեռախոսով տեղեկացնեն մեղավոր վարորդի ապահովագրական ընկերությանը՝ ներկայացնելով համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկությունները։

Համաձայնեցված հայտարարագրի ձևը և այն լրացման հրահանգը բեռնելու համար այցելեք հետևյալ հղումով՝ https://appa.am/index.php?al=agreed_declaration :

Ուշադրություն՝ Ավտովթարների պարզ գրանցման համակարգի դեպքում՝

- լուսանկարների համար որևէ տեխնիկական և որակային պահանջներ սահմանված չեն, բավական է, որպեսզի այդ նկարները բավարար տեսանելիությամբ արտացոլեն ավտոմեքենաների փոխադարձ դիրքերն ու վնասվածքները,
- պատահարը հնարավոր է գրանցել և ճանապարհի երթևեկելի մասը վերականգնել
 ոչ ավել, քան 10 րոպեի ընթացքում։

2. <ամաձայնեցված հայտարարագրով կարգավորվող վթարներից բացի մնացած բոլոր ավտովթարների գրանցում

Համաձայնեցված հայտարարագրով կարգավորվող վթարներից բացի մնացած բոլոր ավտովթարները գրանցվում են միայն Ճանապարհային ոստիկանության (այսուհետ՝ ՃՈ), իսկ Երևան քաղաքում՝ պարեկային ծառայության կողմից։

Նման դեպքերում անհրաժեշտ է, որպեսզի վարորդները՝

- վթարից անմիջապես հետո ավտովթարի վայր հրավիրեն ՃՈ-ին, իսկ Երևան քաղաքում՝ պարեկային ծառայությանը և հետևեն վերջինիս ցուցումներին,
- > մինչև ՃՈ-ի, իսկ Երևան քաղաքում՝ պարեկային ծառայության կողմից ժամանումը չտեղաշարժեն ավտոմեքենաները և միջոցներ ձեռնարկեն ավտոմեքենաների հետքերն ու առարկաները պահպանելու ուղղությամբ,
- վթարը տեղի ունենալուց հետո առավելագույնը 40 րոպեի ընթացքում հեռախոսով տեղեկացնեն իրենց ապահովագրական ընկերություններին՝ առանց վերջինին սպասելու պարտավորության։
- մասնակցել ՃՈ-ի, իսկ Երևան քաղաքում՝ պարեկային ծառայության կողմից սահմանված կարգի փաստաթղթերը կազմելու գործընթացին՝ դրանցում ներկայացնելով իրենց վերաբերող պատասխանները։

Ուշադրություն՝

Այն դեպքում, երբ ավտովթարի արդյունքում պատճառվել են միայն գույքային վնասներ, ապա ՃՈ-ի, իսկ Երևան քաղաքում՝ պարեկային ծառայության կողմից պատահարի վերաբերյալ վարչական վարույթ կարող է հարուցվել միայն այն դեպքում, **երբ նման պահանջ են ներկայացնում վթարի կողմերը**՝ անկախ վթարի հետ կապված վարորդների միջև համաձայնության առկայությունից կամ բացակայությունից։ Ճանապարհային ոստիկանը, իսկ Երևան քաղաքում պարեկային ծառայողը չի կարող պնդել, որ վթարի հետ կապված պետք է իրականացվի վարչական վարույթ, եթե վթարի կողմ համարվող վարորդները չեն ցանկանում վարույթի իրականացում։ Ընդ որում՝ նույնիսկ վարորդների միջև վեճի առկայության դեպքում, առանց վարչական վարույթի իրականացման գործընթացի շրջանակներում ՃՈ-ի, իսկ Երևան քաղաքում՝ պարեկային ծառայության կողմից կազմված պատահարի գրանցման փաստաթղթերը և դրանցով հավաքագրված ելակետային տվյալները լիովին բավարար են, որպեսզի ԱՊՊԱ ոլորտում պատշաճ եղանակով իրականացվի փորձաքննություն և որոշվի պատահարում մեղավոր կողմը (կողմերը)։

Կարևոր է հիշել նաև, որ վարչական վարույթի չիրականացման դեպքերում ՃՈ-ի կողմից կազմված պատահարի գրանցման փաստաթղթերը ՃՈ-ն, իսկ Երևան քաղաքում՝ պարեկային ծառայությունը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով փոխանցում է Բյուրոյին և ապահովագրական ընկերություններին՝ պատահարի գրանցման պահից հետո՝ առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում, և այդ փաստաթղթերը ճանապարհային ոստիկանից, իսկ Երևան քաղաքում պարեկային ծառայողից ստանալու և ապահովագրական ընկերություն կամ Բյուրոյին փոխանցելու պարտավորություն վարորդները չունեն։